19 դեկտեմբերի 2013 թվականի N 1421 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1355-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸԹՆԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման առանձին մարմիններին գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին>> N 1355-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի <<ՀՀ Ազգային ժողով>> տողի <<Ավտոմեքենաների քանակը>> սյունակում <<14>> թիվը փոխարինել <<15>> թվով, իսկ <<ՀՀ վերահսկիչ պալատ>> տողի <<Ավտոմեքենաների քանակը>> սյունակում <<2>> թիվը՝ <<3>> թվով.

2) որոշման N 4 հավելվածի <<1154 Համապետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայություններ>> բաժնի <<քանակական>> տողում <<14>> թիվը փոխարինել <<15>> թվով, իսկ <<1161 Վերահսկիչ ծառայություններ>> բաժնի <<քանակական>> տողում <<2>> թիվը՝ <<3>> թվով.

3) որոշման N 5 հավելվածում <<ՀՀ Ազգային ժողով>> մասի <<Մարդատար ավտոմեքենա>> տողում <<14>> թիվը փոխարինել <<15>> թվով, իսկ

<<

ՀՀ Վերահսկիչ պալատ				**25,000.0**
Բաժին N 11, Խումբ N 01, Դաս N 01				25,000.0
01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ				**25,000.0**
ՄԱՍ Ի. ԱՊՐԱՆՔՆԵՐ				25,000.0
Մարդատար ավտոմեքենա	ԲԸԱՀ	հատ	1	15,000.0
Մարդատար ավտոմեքենա	ԲԸԱՀ	հատ	1	10,000.0

>>.

տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<

ՀՀ Վերահսկիչ պալատ				**25,000.0**
Բաժին N 11, Խումբ N 01, Դաս N 01				25,000.0
01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ				**25,000.0**
ՄԱՍ Ի. ԱՊՐԱՆՔՆԵՐ				25,000.0
Մարդատար ավտոմեքենա	ԲԸԱՀ	հատ	2	16,600.0
Մարդատար ավտոմեքենա	ԲԸԱՀ	հատ	1	8,400.0

>>:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատին իր միջոցների հաշվին ձեռք բերվող 12,000.0 հազ. դրամ արժողությամբ ավտոմեքենան ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետին համապատասխան՝ բանակցային ընթացակարգով, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ